

ՍՍՀՄ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՑԸ ԱՄՆ

ԱՄՆ-ի եկեղեցիների ազգային խորհրդի հրավերով ս/թ. փետրվարի 16-ից մարտի 9-ը ԱՄՆ այցելեց Սովետական Միության քրիստոնեական եկեղեցիների պատվիրակությունը՝ գլխավորությամբ Կիևի ռուս պրավոսլավ եկեղեցու միտրոպոլիտ Ֆիլարետի:

Այդ պատվիրակության մեջ Մայր Աթոռ ս. Էջմիածինը ներկայացնում էր Մայր Աթոռի դիվանապետ և Հայաստանյայց եկեղեցու միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ տ. Արսեն եպս. Բերբերյանը:

Սույն փոխայցելության նպատակն էր՝ խորացնել այն հարաբերությունները, որոնք սկսվել էին երկու երկրների հոգևորականների փոխադարձ այցելությունների և աստվածաբանական բանակցությունների միջոցով 1956 թվականից՝ ավելի լավ հասկանալու համար երկու երկրների քրիստոնեական եկեղեցիների ավանդությունների բազմազանությունը, սերտացնելու եղբայրական կապերը, զարգացնելու փոխադարձ հասկացողությունը և գործակցությունը միմյանց միջև էկումենիկ ոգով՝ խաղաղության ամրապնդման, սոցիալական արդարության, մարդու իրավունքների պաշտպանության, ինչպես նաև երկու երկրների ժողովուրդների բարեկամության գործին միասնաբար ծառայելու առաջադրությամբ:

ԱՄՆ-ի եկեղեցիների ազգային խորհրդի կողմից նախապես պատրաստված ծրագրի համաձայն, պատվիրակությունը եղավ Նյու-Յորքում, Փրինսթոնում, Վաշինգտոնում, Չիկագոյում և այլ քաղաքներում:

Փետրվարի 18-ին պատվիրակությունը հյուր եղավ Հյուսիսային Ամերիկայի արևելյան թեմի հայոց առաջնորդ տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանի: Երեկոյան ժամը 18-ին ս. Վարդան Մայր տաճարում տեղի ունեցավ էկումենիկ աղոթք և բարիգալստյան խոսքերի փոխանակում Թորգոմ արքեպիսկոպոսի և Ֆիլարետ միտրոպոլիտի միջև:

Ս. Վարդան եկեղեցում կազմակերպված էկումենիկ աղոթքին ներկա էին նաև տ. Տիրան արքեպ. Ներսոյանը, տ. Բաբկեն եպս. Վարժապետյանը, օտար հարանվանությունների բազմաթիվ ներկայացուցիչներ, թղթակիցներ:

Էկումենիկ աղոթքից հետո Նյու-Յորքի հայոց առաջնորդարանի դահլիճում տեղի ունեցավ հյուրասիրություն: Սիրո սեղանի շուրջ, ուր կային մոտ 50 ներկաներ, կրկին անգամ տեղի ունեցան բարիգալստյան և ողջույնի բաժակաճառեր: Ջերմ խոսքերով հանդես եկան տ. Թորգոմ, տ. Տիրան արքեպիսկոպոսները, տ. Արսեն եպիսկոպոսը, տ. Յուվենալի միտրոպոլիտը և այլ անձինք:

Ելույթների ժամանակ առանձնապես շեշտվեցին հայ և ռուս եկեղեցիների եղբայրական, բարիդրացիական հարաբերությունները, հատկապես երկու եկեղեցիների արդի պետերի՝ Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի և Ն. Ս. Տ. Պիմեն Պատրիարքի միջև: Շեշտվեց նաև հայ և ռուս ժողովուրդների մանավանդ վերջին ավելի քան 50 տարիների համագործակցությունը, որի համար ամբողջ աշխարհում ապրող հայ ժողովրդի զավակները ուրախ են, քանի որ մեր ժողովուրդն ապրում է խաղաղ ու ապահով պայմաններում:

Հյուրասիրությունն ավարտվեց ուշ երեկոյան:

Չիկագոյում մարտի 4—5-ը պատվիրակության անդամները մասնակցեցին ԱՄՆ-ի եկեղեցիների ազգային խորհրդի նստաշրջ-

ջանին և ելույթ ունեցան «Հավատո և կարգի» բաժանմունքում:

Պատվիրակության անդամները մասնակցեցին զանազան պաշտամունքների, քարոզեցին և միասին աղոթեցին ամերիկացի բրիստոնյա եղբայրների հետ: Այցելեցին աստվածաբանական կենտրոններ, ուսումնարաններ և համալսարաններ: Հանդիպումներ կազմակերպեցին դասախոսների և ուսանողների, հոգևորականների և հավատացյալների հետ:

Նյու-Յորքում, ի պատիվ պատվիրակության, ընդունելություն տրվեց Ամերիկայի սինագոգների խորհրդի կողմից: Պատվիրակության որոշ անդամներ հանդիպումներ ունեցան հրեա համայնքների ղեկավարների հետ, տարբեր քաղաքներում:

Պատվիրակության անդամները հարցազրույցներ ունեցան լրագրողների և հեռուստատեսության, ռադիոյի ու մամուլի ներկայացուցիչների հետ:

Պատվիրակությունը վերոհիշյալ քաղաքներում ծանոթացավ ԱՄՆ-ի հասարակական և մշակութային կյանքին՝ այցելելով թանգարաններ և այլ տեսարժան վայրեր: Պատվիրակության անդամները Վաշինգտոնում այցելեցին Սպիտակ տուն, կապիտոլ և Արտաքին գործերի մինիստրություն, հանդիպումներ ունեցան սենատորների, կոնգրեսմենների և այլ հասարակական գործիչների հետ:

ՍՍՀՄ-ի եկեղեցիների պատվիրակությունը Նյու-Յորքում այցելեց ՄԱԿ-ի կենտրոնը և ընդունվեց քարտուղար Ալբատֆորտ Մորոյի կողմից:

Փրինսթոնի աստվածաբանական սեմինարիայում փետրվարի 19—24-ը երկու կողմերի ներկայացուցիչները ունեցան աստվածաբանական դիալոգներ «Հիսուս Քրիստոս ազատագրում է և միացնում» նյութի շուրջ:

Հանդիպումների ընթացքում երկու կող-

Տ. Արսեն եպս. Բերբերյանը, Կոլոմբոյի կաթոլիկ եկեղեցու եպիսկոպոս Էդվարդ Ժ. Հերման և ռուս եկեղեցու ներկայացուցիչ տ. Մատթեոս քհն. Սաթենյուքը

մերը ոչ միայն ներշնչված էին երկու երկրների եկեղեցիների և ժողովուրդների համագործակցությունը և փոխադարձ հարաբերությունները սերտացնելու ցանկությամբ, այլև տրամադրված էին նպաստելու ԵՀԽ-ի 5-րդ համագումարի աշխատանքներին:

Երկու երկրների ներկայացուցիչներն էլ ցանկացան տալ օրինակ համագործակցության և եկեղեցիների միության հետագա զարգացման, նպաստել, որ ստեղծվեն պայմաններ խաղաղության, արդարության և ազատության՝ աշխարհի բոլոր ժողովուրդների համար:

Երկու երկրների ներկայացուցիչները մի անգամ ևս շեշտեցին քրիստոնեական իրենց ընդհանուր այն համոզումը, որ Հիսուս Քրիստոս աղբյուրն է, ավետաբերը և ներշնչողը ազատության և միության: Հիսուս Քրիստոս մեր խաղաղությունն է: Նա մեզ ճշմարտապես ազատագրում է: Նա մեր միության խարիսխն է, հիմքը եկեղեցու փրկչական առաքելության, առաջնորդը յուրաքանչյուր անհատի և բոլոր ժողովուրդների, ազգերի ու մարդկության:

Հանդիպումների ընթացքում ուսումնասիրվեցին նաև այն տարբերություններն ու ընդհանրությունները, որոնք գոյություն ունեն օրթոդոքս և բողոքական եկեղեցիների միջև փրկության-ազատության, շնորհների, սրբագործման և անձի փրկության խնդիրներում:

Կոչ եղավ գործնականապես մասնակցելու, իբրև անհատ և իբրև եկեղեցի, սոցիալական և քաղաքական կյանքին, պայքարելու մեղքի և սատանայի սև ուժերի դեմ:

Երկու կողմերը միաձայնությամբ հաստատեցին կարևորությունը երկու երկրների համագործակցության և հարաբերության, իրենց ժողովրդի բարօրության և ամբողջ աշխարհի համար: Խնդիր դրվեց, որ պետք է համագործակցել ի նպաստ միջազգային լարվածության մեղմացման պրոցեսի խորացման, զինաթափման զարգացման վերաբերյալ տեղի ունեցող բանակցությունների, որոնց համար երկու երկրների պետությունները ջանքեր են գործադրում:

ՈՒՂՂԱՓԱՌ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿՐԵՏԵՈՒՄ

Ս/թ. մարտի 7—14-ը Կրետեում գումարվեց օրթոդոքս եկեղեցիների աստվածաբանների խորհրդակցական մի ժողով՝ պարզաբանելու համար Եկեղեցիների համաշխարհային խորհրդի Նայրոբիում կայանալիք 5-րդ համագումարում քննվելիք մի շարք հարցեր:

Օրթոդոքս եկեղեցիների աստվածաբանների խորհրդակցությանը մասնակցեցին նաև հայ եկեղեցու ներկայացուցիչներ՝ Երուսաղեմի ս. Հակոբյանց վանքի դիվանապետ և Ժառանգավորաց վարժարանի ու ընծայարանի վերատեսուչ տ. Շահե արքեպ. Ահեմյանը, Մայր Աթոռ ս. Էջմիածնի դիվանապետ և միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ տ. Արսեն եպս. Բերբերյանը և Վիեննայի հայոց հոգևոր հովիվ տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը:

Հատկանշական է, որ հայ եկեղեցին միակն էր այդ խորհրդակցությունում ոչ քաղկեդոնական եկեղեցիներից:

ԵՀԽ-ի 5-րդ համագումարում ծրագրված է քննել հետևյալ վեց հարցերը, մեկ ընդհանուր նշանաբանով՝ «Հիսուս Քրիստոս ազատագրում է և միացնում».

ա.—Խոստովանել Քրիստոսին այսօր.

բ.—Միությունն ի՞նչ է պահանջում.

գ.—Որոնում համաշխարհային հասարակության. տարբեր հավատալիքների, մշակույթների և գաղափարախոսությունների տեր մարդկանց համատեղ որոնումը.

դ.—Դաստիարակություն՝ ազատագրման և համաշխարհային հասարակության ըստեղծման համար:

ե.—Ընկերային անարդար կառուցվածքներ և պայքար ազատագրության համար.

զ.—Մարդկային զարգացում. իշխանության, մասնագիտացման և կյանքի մակարդակի երկդիմի բնույթը:

Անցյալ տարի, հունիսին, Բուխարեստում գումարված օրթոդոքս աստվածաբանների մի ժողով զբաղվել էր արդեն առաջին հարցով:

Կրետեի սույն ժողովը զբաղվեց երկրորդ և հինգերորդ հարցերով:

Այս տարի, սեպտեմբերին, օրթոդոքս աստվածաբանների մի այլ խորհրդակցություն է լինելու ս. Էջմիածնում՝ քննելու մի հարց՝ ծեսն իբրև ավետարանական քարոզություն, իբրև քրիստոնեական վկայություն և իբրև հոգեկանություն:

Կրետեի ժողովում «Միությունն ի՞նչ է պահանջում» վերնագրով բացման խոսք է ասել հայ եկեղեցու ներկայացուցիչ տ. Շահե արքեպ. Ահեմյանը՝ շոշափելով հետևյալ